



Հայ Կրթական Հիմնարկություն
Armenian Educational Foundation, Inc.
ՀԿՀ ՀՀ մասնաճյուղ, Մայրաթ-Նովայի պող., 19 շենք, հեռ. 011 53 14 85, www.aef.am

Հիմն. 1950

Քանի որ կրթությունը կարևոր է

www.aef.am

ՀԿՀ 2021-2022 թթ. կրթաթոշակ

2021-2022 թթ. ուսումնական տարվա կրթաթոշակի մրցույթ

Հայ Կրթական Հիմնարկությունը հայտարարում է կրթաթոշակների մրցույթ՝ 2021-2022 թթ. նոր ուսումնական տարվա համար: Կրթաթոշակները տրամադրվում են տվյալ ուսումնական տարվա ուսման վարձի չափով՝ խրախուսելու և աջակցելու բարձր առաջադիմությամբ և միևնույն ժամանակ նյութապես անապահով ուսանողներին, ովքեր սովորում են ՀԿՀ-ի կողմից նախընտրած մասնագիտություններով <https://aef.am/university/>:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ պետական բուհերի առկա վճարովի համակարգում 2021 թ.-ի սեպտեմբերից 1-ին կուրսում սովորել պատրաստվող (դիմելու պահին դեռևս դպրոցում սովորող) և բարձր կուրսերի ուսանողներ, այդ թվում՝ և՛ մագիստրանտներ, և՛ ասպիրանտներ:

Կրթաթոշակները կտրամադրվեն ՀՀ քաղաքացիներին, սիրիահայ և լիբանանահայ ուսանողներին, ինչպես նաև Արցախում և Ջավախքում բնակվող ազգությամբ հայ այն ուսանողներին, ում ակադեմիական միջին նիշը առնվազն 15, 3.2 կամ 75 միավոր է:

Առցանց հայտադիմումը հասանելի կլինի 2021 թ.-ի ապրիլի 6-ից մինչև մայիսի 16-ը:

Հայտադիմումի լինքը՝ ստորև.

<https://apply.aef.am/>

Մանրամասների և հավելյալ տեղեկությունների համար կարող եք գրել մեր էլ. հասցեին՝ aef@aef.am, կամ զանգել (+374)11 53 14 85 հեռախոսահամարով:

Հայ Կրթական Հիմնարկության կառավարման խորհուրդ